հայոց համար մի հիւրատուն։ Իսկ Հայաստանում էլ հայ մարդկանց ձեռքով կաթոլիկութիւն քարոզելու նպատակով՝ սկսեցին հայ մանուկներ ընդունել «հոչակաւոր» փրոփականդայի դպրոցը, որը կաթոլիկ մոլեռանդութեան մի օջախ հանդիսացաւ իր ամբողջ գոյութեան ընթացքում (Զամչեան՝ «Հայ. Պատմ.», Գ. 520)։

Բայց չմոռանանք փակագծի մէջ խսկոյն աւելացնել, որ եթէ Արգար դպրի քաղաքական առաքելութիւնը անյաջող անցաւ, սակայն նրա Եւրոպա ընկնելը մեծ օգուտ բերեց հայ տպագրութեան գործին։ Արգարը առաջին հայ տպարանը հիմնեց Վենետիկում (1565 թ.) եւ տպագրեց մի շարք գրքեր։ Հետագայում այդ տպարանը փոխադրուեց Պոլիս եւ շատ արդիւնաւէտ գործունէութիւն ունեցաւ։

4.

Այդքան դառն փորձերից յետոյ՝ հայ քաղաքական մտածողութիւնը այնուամենայնիւ չի յուսահատւում եւ չի հրաժարւում Հայաստանի անկախութեան գաղափարից։

Եւ մենք կրկին տեսնում ենք, որ Ստեփանոս Սալմաստեցու փորձերից մի դար յետոյ նոյնը կրկնում է ժամանակի կաթողիկոսը, Յակոբը Դ. Զուղայեցին (1655–1680) — նո՛յն նպատակով եւ նո՛յն ճանապարհով։

Դա մի կողմից ապացուցանում է, թէ ուրեմն ո՞րքան վատթար էր հայ ժողովրդի վիճակը մահմեդական տիրապետութեան ներքոյ. իսկ միւս կողմից՝ որ այդ դրութիւնից ազատուելու համար հայ ժողովուրդն եկել էր այն անխախտ համոզման, որ միայն մէկ ճանապարհ կայ — Հայաստանի Անկախութիւնը։

1678-ի ամառը Զուղայեցին մէկ գաղտնի ժողով է գումարում Էջմիածնում, որին մասնակցում էին, բացի իրենից, 12 հոգի — վեց արքեպիսկոպոս եւ վեց աշխարհական մելիքներ ու իշխաններ Հայաստանի զանազան կողմերից։

Ժողովն ընտրում է վեց հոգուց մի պատգամաւորութիւն — երեքը՝ հոգեւորական, երեքը՝ աշխարհական — որը կաթողիկոսի գըլխաւորութեամբ պիտի անցնէր Եւրոպա՝ Հայաստանի ազատութիւնը խնդրելու։ Պատգամաւորութեան մէջ էր նաեւ Իսրայէլ Օրին, իր հօր փոխարէն։ Որոշուած էր՝ հարկ եղած դէպքում մի քանի գիջումներ էլ անել կաթոլիկ եկեղեցուն, եթէ դա պահանջուէր։

Անկարգրելի նեղութիւններից յետոյ՝ յաջորդ տարուան ամեռը պատգամաւորութիւնը հասնում է Պոլիս։ Բայց աւելի առաջ գնալ չի կարողանում մի շարք պատճառներով, որոնց քննութեան մէջ չենք մտնում։ Զատամեալ Հայրապետը մեռնում է (1680 թ.) վշտից խորտակուած եւ պատգամաւորութիւնը ձեռնունայն վերադառնում է հայրենիք։ Միայն Իսրայէլ Օրին շարունակում է իր ճանապարհը, հասնում է Եւրոպա, ուր գիտութիւն ու փորձառութիւն ձեռք բերելով, պատրաստւում է իր ապագայ քաղաքական գործունէութեան համար։

Զուղայեցուց յետոյ, Եղիազար կաթողիկոսի օրով, հայ իշխաններն ու մելիքները նորից ժողովի են հաւաքւում Էջմիածնում, նորից ընտրում են մի պատգամաւորութիւն, որը պիտի գնար եւրոպական արքունիքների դռները նորից բախելու։ Պատգամաւորութիւնը այս անգամ էլ հասնում է մինչեւ Կարին եւ աւելի առաջ գնալ չի կարողանում «անհաւատների պատճառով», "a cause des infideles" — ասում է փաստաթուղթը[1]։

Այնուհետեւ հայ քաղաքական մտքի ղեկավարութիւնը իր ձեռքն է առնում Իսրայէլ Օրին։ Սկզբում նա՛ էլ գնում է ճիշդ նոյն ճանապարհով, որով ընթացել էին իր նախորդները։ Նա՛ եւս Հայաստանի ազատութիւնը փորձում է գտնել եւրոպական արքունիքներում։

Սիսիանի Անգեղակոթ աւանի ժողովում (19 Ապրիլ, 1699) թ.) հայ մելիքներն ու իշխանները, Օրիի առաջարկութեամբ, որոշում են դիմել եւրոպական պետութիւններին, գըլխաւորապէս Պապին, Գերմանիայի կայսրին եւ Պֆալցի կայսրընտիր Եոհան Վիլհելմին։ Վերջինս անձնական մօտիկ ծանօթութիւններ ունէր Օրիի հետ եւ շատ մեծ ազդեցութիւն Գերմանիայում ու ամբողջ Եւրոպայում։

Ընդհանրապէս Օրին եւ իր գործակիցները

---

1) Եղեանց, «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովուրդի հետ», փաստ. թիւ 2։